

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի  
31.01.2024թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրություն

Օրակարգով.

1. 2023-2024 ուստարվա առկա ուսուցման քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 28-ը: ԵԼՀ ֆակուլտետի ղեկան Գ. Ռ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2023-2024 ուստարվա առկա ուսուցման քննաշրջանի արդյունքների ամփոփմանը: Նշվեց, որ ընհանուր առմամբ արդյունքները գոհացուցիչ են: Նա գործընկերներին մանրամասն ներկայացրեց քննաշրջանի արդյունքները թե՛ մագիստրատուրայում, թե՛ բակալավրիատում:

Գ. Ռ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը: Փոխդեկան Մ. Հ. Յաղուբյանը ներկայացրեց կրթաթոշակի ներկայացվող ուսանողներին:

ԼՍԵՑԻՆ՝

ԵԼՀ ֆակուլտետի անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց երկրորդ կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. Սամվելյան Դավիթ Սեյրանի - «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն» կրթական ծրագրի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող /Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ, երկրորդ կիսամյակ/
2. Մեղրիկյան Էլեն Լևոնի - «Լեզվաբանություն» մասնագիտության «Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն» կրթական ծրագրի բակալավրիատի 4 -րդ կուրսի ուսանողուհի /Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ, երկրորդ կիսամյակ//
3. Մողմունյան Մարգարիտ Արամի - «Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի /Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ, երկրորդ կիսամյակ/:

## Ընթացիկ հարցեր

- Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Գ. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետում ստեղծված հայ-իսպանական լսարանի գործունեության հիմնական նպատակները: Հ. Գ. Բաղդասարյանը՝ որպես այդ լսարանի պատասխանատու, որը համակարգում է լսարանի աշխատանքները, ներկայացրեց երկկողմ համագործակցության որոշ ծրագրեր, որոնց նպատակը ԵՊՀ-ի և Կադիսի համալսարանի միջև ակադեմիական, գիտական և մշակութային կապերի խորացումն ու զարգացումն է: Նա նշեց նաև, որ այս համագործակցության արդյունքում առաջին կիսամյակում իսպանական բաժնի ուսանողների և դասախոսների համար լեզվաբանական և մշակութային տարբեր թեմաներով կազմակերպվել է 6 դասախոսություն, որոնք կարդացել են Կադիսի համալսարանի դասախոսները, ընդ որում՝ 2 դասախոսությունը կազմակերպվել է ԵՊՀ-ում, իսկ 4-ը՝ առցանց՝ նորաբաց լսարանում:

## Որոշեցին՝

- Երաշխավորել ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Բ. Գ. Թ., դոցենտ Ռոզա Մելիքսեթյանի «Ֆրանսերենի արտասանության կանոնների մեթոդական ձեռնարկը» երաշխավորել հրատարակության: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Միրիջանյանին /գիտ. դեկ.՝ Բ. Գ. Դ., պրոֆ. Գ. Հ. Մուրադյան/: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Միլենա Ավետիսյանին /գիտ. դեկ.՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Ս. Ք. Գասպարյան/: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Աննա Սարգսյանին /գիտ. դեկ.՝ Բ. Գ. Թ., դոց. Ք. Ս. Հարությունյան/: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և

գիտխորհրդի նախագահ, Բ. Գ. Թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ. Գ. Թ., դոցենտ՝

Մ. Գ. Դալայան

31.01.2024 թ.